# Նեփին աղոթում է ժողովրդի համար

*Այս պատմությունը կարող եք կարդալ Հելաման 7.10-17 և 8.7-10:*



Նեփին մարգարե էր: Նա կոչվել է Նեփիի անունով, որը բերել էր արույրե թիթեղները: Նա անհանգստանում էր ժողովրդի համար: Նրանք դադարել էին հետևել Աստծուն:



Նեփին գնաց իր պարտեզը: Նա բարձրացավ պարտեզի մի աշտարակի վրա և այնտեղ աղոթեց Աստծուն: Նա աղոթեց ժողովրդի համար:

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ԷՆԴՐՅՈՒ ԲՈՍԼԻ



Որոշ մարդիկ նկատեցին Նեփիին աշտարակի վրա: Նրանք կանգ առան լսելու և հավաքեցին ուրիշներին իրենց շուրջը՝ լսելու: Երբ Նեփին ավարտեց աղոթքը, նա նկատեց, որ նրանք նայում էին և սկսեց ուսուցանել նրանց:



Նեփին խնդրեց մարդկանց ապաշխարել: Նրանցից ոմանց դուր չեկավ Նեփիի ուսուցանածը: Բայց շատերն էլ լսեցին: Նրանք նախընտրեցին ապաշխարել և փոխեցին իրենց ուղիները: